Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Ռումինական գրականություն, Արձակ, Պատմվածք
13+
Թարգմանիչ՝ Ռ. Ռուբինյան

Իոն Լուկա Կարաջալե
Սմոտոչոն և Կոտոչոն

Հնադարյան ժամանակներում ապրող Օրեստի և Պիլադայի ընկերության մասին լեգենդը պահպանվել է մինչև մեր օրերը: Բայց, ճիշտն ասած, եթե մի բան կա, որով կարող է պարծենալ մեր դարը, ապա դա Սմոտոչոյի և Կոտոչոյի ընկերությունն է:

Եթե դուք սկսեք պատմել նրանցից մեկի մասին, ապա ստիպված կլինեք խոսել նաև մյուսի մասին: Հենց այդ երկուսն էլ կարող են գալիք սերունդների համար անբաժան ընկերության օրինակ ծառայել:

Ով որ ճանաչում է Սմոտոչոյին, նա գիտե նաև Կոտոչոյին, քանի որ նրանք իրար հետ ավելի սերտորեն աճեցին, քան սիամի երկվորյակները: Երկուսն էլ աշխատում են միևնույն գրասենյակում՝ որպես արտագրողներ և ծառայության ընդունվեցին միևնույն օրը: Երկուսն էլ միևնույն պանդոկի հաճախորդներ են և միևնույն ժամին ուտում են միևնույն ճաշը:

Եթե դուք արտասանել եք Սմոտոչոյի անունը, ապա և դրանով տվել եք նաև Կոտոչոյի անունը կամ ընդհակառակը: Սմոտոչոն ծնվել էր Սևերինում հենց այն նույն օրը և նույն ժամին, երբ Կոտոչոն առաջին անգամ տեսավ աստծո լույսը իր հայրենի Դորոխոյում:

Նրանց երկուսին էլ Բուխարեստ բերեց արտագրողի պաշտոնի նրանց երազանքը:

Եթե որևէ խաչմերուկում ձեր առաջ կհայտնվի նրանցից մեկը, ապա մի քիչ սպասեցեք և դուք անմիջապես կտեսնեք նաև մյուսին, որը չգիտես ինչու հապաղել էր և արագացնում է քայլերը, որպեսզի հասնի իր կեսին: Այո՛, իսկապես կեսին, որովհետև Սմոտոչոն ու Կոտոչոն մեկ մարդ են՝ երկու դեմքով՝ մի անբաժան արարածի երկու մասեր:

Նրանց կյանքը կարելի է նմանեցնել արեգակնային համակարգությանը, որտեղ յուրաքանչյուր մոլորակ հերթականությամբ կատարում է կենտրոնի դեր, իսկ մյուսը պտտվում է նրա շուրջը: Երբ Սմոտոչոյի բաճկոնի գրպանը որոշ չափով ծանրացած էր, ապա նա դառնում էր արև, իսկ Կոտոչոն՝ երկրորդական մոլորակ: Մյուս օրը եթե Կոտոչոյի

բաճկոնի գրպանը տեսնեին ուռած, որը լույս էր ճառագում տարածության մեջ, ապա այդ ժամանակ Սմոտոչոն էր հնազանդորեն ձգվում դեպի նա:

Երկուսն էլ ծխում են, բայց նրանցից ոչ մեկի մոտ ծխախոտատուփ չկա: Հավանական է, որ հենց դրա համար էլ նրանք ծխախոտ չեն գնում՝ վախենալով, որ հանկարծ ծխախոտը կչորանա իրենց գրպանում: Եթե Սմոտոչոն ձեզանից ծխախոտ խնդրի, դուք նրան պետք է տաք երկու փաթեթի համար, այլապես նա ձեզանից կվերցնի այնքան, որքան կշռում է հեղինակավոր սենատորի սիգարետը, դրան ավելացրած նաև մի քանի հատ ձեր ծխախոտի թղթից: Այնուհետև Սմոտոչոն կհեռանա ձեզանից իր ավարը Կոտոչոյի հետ կիսելու համար:

Եթե բարեկամներից որևէ մեկը ցանկանում է Կոտոչոյին պատվել մի բաժակ սուրճով, ապա վերջինս կհրաժարվի՝ հօգուտ Սմոտոչոյի և այդ ձևով բարեկամը ստիպված կլինի հյուրասիրել երկուսին:

Երբեմն նրանք թատրոն են գնում, տոմսի վրա ծախսելով մի ֆրանկից ոչ ավել. նրանցից մեկը տոմս է վերցնում, իսկ մյուսը հաջողեցնում է ներս մտնել կոնտրամարկայով:

Նրանք իրար հետ երբեք բիլիարդ չեն խաղում: Չէ որ, բոլոր դեպքերում, նրանց մի կեսը կտուժի և դա այնքան անհավանական կլինի, որքան, ասենք, հայրը դավադրություն կազմակերպի սեփական որդու դեմ: Երբ գայթակղությունը մեծ էր լինում, նրանցից մեկն ու մեկը մի ակնհայտ նորեկի հրավիրում է մի պարտիա կարամբոլ խաղալու, և ինչքան էլ խաղը երկարեր, մյուսը չմասնակցելով հանդերձ, անպայման քարշ կգար բիլիարդի շուրջը և կաներ ամեն ինչ՝ իր կեսի հակառակորդին հուսակտուր անելու համար: Երբ վճարելու համար դրամ ունենում էին, ապա նրանք իրենց պարտքերը վճարում էին ազնվորեն: Դրա համար էլ Սմոտոչոն և Կոտոչոն կարողանում էին որոշ չափով պարտք անել այն սրճարանում, որտեղ ամեն օր, մեծ մասամբ ուրիշների հաշվին, հետճաշյա մի բաժակ սուրճ էին խմում: Մատուցողը նրանց երկուսի գումարը միասին էր հաշվում և պարտքերի գրքի մեջ երկուսի անունը գրում նույն թղթի վրա: Երբ պարտքը սկսում էր գերազանցել նախատեսված գումարից, հասնելով երկու լեյի, ապա ընկերներից նա, ով առաջինն էր սրճարանի դռնից ներս մտել և այդ պահին հանդիսանում էր արեգակնային սիստեմի կենտրոնը, ինքն էր վճարում հաշիվը:

Սմոտոչոն և Կոտոչոն լիակատար լուսավորված տղաներ են: Նրանք համարյա ամեն ինչ գիտեն ու միևնույն ժամանակ՝ ոչինչ: Դա նրանց իրավունք է տալիս իրենց համարելու բազմակողմանիորեն զարգացած մարդիկ: Սմոտոչոն աչքի է ընկնում բռնկվող երևակայությամբ, Կոտոչոն խորամիտ է: Նրանք երկուսն էլ հարգարժան մասնակիցներն են էպիկական պոեզիայի, ապագայի արդյունաբերության, սահմանադրական սիստեմի թերությունների, մետաֆիզիկական միասնության, հեռագրի կատարելագործման, ինչպես և եգիպտական աստվածապետության մասին սրճարանում ծայր առնող բանավեճերին:

Աշխատավարձ ստանալու առաջին շաբաթը ընկերները ընդունում են աշխարհի ներդաշնակությունը, պատմական պրոցեսի կանխորոշությունը: Նրանք հաստատում են, որ մարդը անասուն չէ և գոյություն չունի միայն այն բանի համար, որ ուտի ու խմի, այլ նա օժտված է բարձր առաքելությամբ՝ աստծու և տիեզերքի միջև միջնորդ լինելու համար: Հավատացնում են, որ այժմյան կառավարությունը անհրաժեշտ է երկրի համար: Մի խոսքով պահպանողական տրամադրություններ ունեն: Բայց բավական էր, որ վերջին դրամները անհետանային նրանց բաճկոնների գրպաններից, երբ Սմոտոչոն ու Կոտոչոն մի կողմ նետեին այդ կեղծ, հազար անգամ ծամծմված սկզբունքները: Մարդկային կյանքը սկսում էին պատկերացնել մառախլապատ, որը չունի ոչ սիստեմ և ոչ էլ կարգուկանոն: Բոլոր կառավարություններն էլ վատն են, իսկ հիմիկվանը՝ բոլորից վատ: Մարդը կույր պատահականության զոհ է: Բոլորի ճանապարհը մեկ է՝ գերեզման:

— Կե՛ր, Սմոտոչո, խմի՛ր, Կոտոչո,— պատիվ են տալիս մեկը մյուսին անտարբեր կեցվածք ընդունելով:— Միևնույն է, մեզանից ոչինչ չի մնալու:

Ցավոք սրտի, կյանքի վերաբերյալ այդպիսի փիլիսոփայությունը նրանց մոտ ծագում էր աշխատավարձ ստանալու երկրորդ շաբաթվա ընթացքում:

Ով կարող էր մտքովն անցկացնել, որ կգա այնպիսի մի ժամանակ, երբ ընկերների այս իդեալական ներդաշնակությունը կախված կլինի մազից: Պատահեց այնպես, որ Սմոտոչոն սիրահարվեց: Նա իր ընտրյալի հետ ժամադրության էր գնում քաղաքի ծայրամասը, Կոտոչոյի ուղեկցությամբ: Անձը, որի համար հոգոց էր հանում Սմոտոչոն, սկսեց աչք տնկել Կոտոչոյին: Դա իհարկե ակնհայտ թյուրիմացության պատճառով էր, քանի որ ընկերները որոշակիորեն ոչնչով չէին տարբերվում իրարից:

Մի չարաբաստիկ օր այդ թյուրիմացությանը հետևեց մի իրադարձություն՝ ընկերության խզում: Հենց այդ օրը եղանակը փչացավ: Բուխարեստի երկինքը մռայլվեց, կայծակ ճայթեց, անձրև եկավ, բադի ձվի մեծությամբ կարկուտ տեղաց, իսկ հետո երկնակամարում գիսաստղ երևաց ու ռումինացի աստղագետների մոտ վրդովմունք առաջացրեց: Նրանք մոռացել էին այդ գիսաստղի երևալու մասին գրել տարեկան օրացույցի մեջ:

Այդ անսովոր օրվա երեկոյան, Սմոտոչոն, ճնշված ու տխուր, մի գավաթ սուրճ էր խմում, ինչպես ընդունված էր՝ ռոմով: Սրճարանի հաճախորդները, մատուցողները հետաքրքրությամբ հարցնում էին նրան, թե որտե՞ղ է Կոտոչոն: Հարյուրերորդ անգամ էր լսում այդ միևնույն հարցը, երբ հանկարծ ներս մտավ Կոտոչոն՝ մինչև ոսկորները թրջված: Նա նման էր փրչոտ շան ձագի: Ընկերները իրար չէին տեսել քսաներեք ժամ և քառասունհինգ րոպե: Նրանց հանդիպումը անհնար է նկարագրել: Արցունքն աչքերին, նրանք իրար գիրկ ընկան և համբուրվեցին այնպես, ինչպես կհամբուրվեին սիրահարները երկար բաժանումից հետո:

— Սմոտո՛չո...

— Կոտո՛չո...

Երկինքը վայրկենապես բացվեց: Որոտը և կարկուտը դադարեցին: Գիսաստղը անհետացավ հորիզոնի ետևում, բավականություն պատճառելով ռումինացի աստղագետներին, որոնք իրենց մխիթարում էին նրանով, որ եթե իրենց չէր հաջողվել կանխագուշակել գիսաստղի հայտնվելը դա նշել օրացույցում, ապա այն պարզ պատճառով, որ դա մի ծիծաղելի, պոչավոր աստղ էր: